ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 346-Ա

« 30 » ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024Թ.

ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1640-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1640-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին հատկացված 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամը, որպես փոխհատուցում, շահառու ֆիզիկական անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա, հատկացնել մարզի Ջերմուկ համայնքի 2022 թվականի սեպտեմբերի 13-ի հրետակոծության հետևանքով տուժած Ռիտա Աջամօղլյանին:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ ապահովել որոշման պահանջների կատարումը:

3. Որոշման կատարման հսկողությունը, պայմանագրի կնքման ապահովումը վերապահել մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր